

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՏՈՆԵԼԻ ՍՐԲԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փետրվարի 1-ին

ՀՈՎՆԱՆ ՄԱՐԳԱՐԵ

Հովնան մարգարեի վրա դրվում է մի դժվարին պարտականություն՝ Նինվեի մեջ ապաշխարանք քարոզել: Հովնանը նախ խուսափում է այս պարտականության կատարումից: Բայց ի վերջո համակերպվում է աստվածային հրամանին՝ այն հույսով, որ ամենայն հավանականությամբ Նինվեն պիտի չապաշխարի և, հետևաբար, պիտի կործանվի:

Սակայն, ի մեծ զարմանս նրա, նինվեացիները, անսալով նրա քարոզության, որ բաղկացած էր հինգ բառերից, որ է՝ «Երեք օրից Նինվեն պիտի կործանվի», ապաշխարում են և դարձի գալիս:

Ուստի Աստված ներում է նինվեացիներին և խնայում նրանց քաղաքը:

Սա նշանակում է, որ Աստված «Իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա. անձրև է բերում արդարների և մեղավորների վրա» (Մատթ. Ե 45):

Հովնանը համարվում է Հին Կտակարանի 12 «Փոքր» մարգարեներից մեկը: Նրա՝ Նինվե առաքելության մասին կարդալ Դ Թագ. ԺԴ գլխում:

Փետրվարի 2-ին

ՍԱՐԳԻՍ ԶՈՐԱՎԱՐ

Սարգիսը Կապադովկյան Կեսարիայի Գամիրք գավառից էր, քաջ և առաքինի մի զինվորական: Կոստանդիանոս կայսեր օրոք հասել էր ստրատելատության աստիճանի: Հաստատամտորեն քարոզում էր Ավետարանը և կործանում բագիններ ու մեհյաններ:

Երբ թագավորում է Հուլիանոս Ուրացող կայսրը, Սարգիսն իր Մարտիրոս որդու հետ միասին ապաստան է գտնում Հայաստանում, Տիրան թագավորի մոտ: Որոշ ժամանակ անց տեղափոխվում է Պարսկաստան՝ պարսից Շապուհ արքայի մոտ ծառայելով որպես զինվորական:

Իր և որդու ազդեցությունը մեծ է լինում իր հսկողության տակ գտնվող պարսիկ զորքի վրա, որի համար և վերջիններից ոմանք քրիստոնեություն են ընդունում:

Այս հանգամանքը հայտնի է դառնում պարսից արքունիքին, ուստի Սարգսին և իր որդուն պարտադրում են զոհ մատուցել արքայական մեհյանում: Սարգիսը խստիվ կերպով մերժում է հրամանը և համարձակ կերպով անարգում կուռքերը:

Այս բանի համար մոլեգնում են քրմերը և ոտնակոխ սպանում Սարգսի որդուն: Իսկ Սարգիսը ձերբակալվում է, նեղվում բանտ և այնուհետև գլխատվում: Իրեն հավատարիմ տասնչորս պարսիկ զինվորներ վերցնում են նրա մարմինը և զգեստավորում մաքուր հանդերձներով: Սակայն բազավորի հրամանով այս տասնչորս զինվորները գլխատվում են:

Փետրվարի 4-ին

ԱՏՈՄՅԱՆՔ

Մեր Եկեղեցու պատմության մեջ հիշատակվում են երկու խումբ Ատոմյաններ. առաջին խումբը նահատակվել է Ե դարում,

Վարդանանց պատերազմից երկու տարի առաջ, իսկ երկրորդ խումբը՝ 853 թվականին, Դվինում, Բուղա ոստիկանի հրամանով:

Առաջին Ատոմյանք. Վռամյան Հազկերտը, կասկածելով իրեն հպատակ բոլոր քրիստոնյա ազգերին, հատկապես՝ հայերին, աշխատում է նրանց մեջ քիչ թե շատ զինվորական ուժ ներկայացնող տարրը հեռացնել բուն երկրից դեպի օտար աշխարհներ՝ պատճառաբանելով պատերազմական պայմանները:

Ատոմ Գնունին և Մանաճիհր Ռշտունին հարկադրված են լինում իրենց գնդերով մեկնել Պարսկաստանի խորքերը: Կռահելով Հազկերտի մտադրությունը, կես ճանապարհից նրանք ետ են վերադառնում Հայաստան: Տեղեկանալով այս մասին, պարսիկները դիմում են զանազան միջոցների, անգամ սպառնալիքով ցանկանում են հնազանդեցնել նրանց: Ատոմը և յուրայինները մի պահ փորձում են դիմադրություն ցույց տալ բռնակալին: Սակայն մի ոմն ճգնավորի տեսիլքից իմանում են, որ իրենց վախճանը նահատակությամբ պետք է լինի: Այդպես էլ լինում է: Ատոմյանք զինաթափ են լինում և նահատակվում Ձիակալում: Իսկ Մանաճիհր Ռշտունին, որ հասել էր մինչև իր գավառ, հալածվում է պարսիկների կողմից և յուրայինների հետ միասին նահատակվում Ոչխարանից վանքում:

Ատոմի հետ նահատակվածների թվում են. որդին՝ Վարս Գնունին, Վարս Ոստանիկը, Ներսեհ Երվանդունին և Վարձավոր Արծրունին:

Մանաճիհրի հետ նահատակվածներից ոչ ոք չի հիշատակվում:

Երկրորդ Ատոմյանք. կոչվում են նաև Նոր Ատոմյանք: Սրանք, ինչպես ասվեց, նահատակվել են 853 թվականին Դվինում, Բուղա ոստիկանի հրամանով:

Վերջինիս կարգադրությամբ շուրջ 150 վաչելչատես ու հաղթաբազուկ հայ երիտասարդների հավաքում և բանտարկում են Դվինում՝ ընծայաբերելու Բաղդադի ամիրապետին՝ անշուշտ հավատափոխ անելուց հետո: Չհասանելով իր նպատակին, ապինքն՝ չկարողանալով հավատափոխ անել, Բուղան մաս առ մաս նրանց տանջամահ է անում՝ այսպիսով, անշուշտ, հույս ունենալով կենդանի մնացածներին սարսափի ազդեցության տակ հավատափոխ անել: Սակայն այս կերպ էլ չի հասնում իր նպատակին: Գազազած Բուղայի հրամանով, այնուհետև, նահատակության պսակ են ընդունում նաև ողջ մնացածները: Վերջիններիս թվում հիշատակվում են. Ատոմ Անձևացի, Մլեհ Վարաժնունի, Գեորգ Բողկացի և Վասակ Ակեացի:

ՄԱՐԿՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մարկոսը Ասորիքի սահմանի վրա գտնվող Արիթուս քաղաքի եպիսկոպոսն էր Դ դարում: Արիոսականներն ամեն հնարք գործադրում էին Մարկոսին իրենց կողմը ներգրավելու՝ հաշվի առնելով նրա գրչի և խոսքի ուժը: Մարկոս եպիսկոպոսը մասնակցել է Սարդիկեի և Սիրմիքի ժողովներին: Հեղինակ է համարվում «Որդին յամենայնի նման է Հօրը» բանաձևի: Ավելի ուշ ներկա է եղել Սելևկիայի ժողովին: Հենց այդ ժամանակից էլ, հավանաբար, ամբողջովին հարել է ուղղափառությանը:

Երբ Հուլիանոս Ուրացող կայսեր կողմից սկսվում են հալածանքները քրիստոնյաների դեմ, առիթից օգտվելով հեթանոսները ցանկանում են վրեժխնդիր լինել Մարկոս եպիսկոպոսից՝ նրա կողմից իրենց մեհյաններից մեկը քանդելու համար: Հալածանքներից խուսափելու համար սկզբում Մարկոսը թաքնվում է, բայց, իր պատճառով քրիստոնյա եղբայրներին նեղություն չտալու համար, հետագայում ներկայանում է կայսեր և ենթարկվում անլուր չարչարանքների, սակայն որոնց տոկում է քաջությամբ և համբերատարությամբ: Ի վերջո աքսորվում է մի հեռավոր կղզի, որտեղ ևս նվիրվում է՝ հեթանոսներին քրիստոնյա դարձնելու սրբազան գործին:

Մարկոս եպիսկոպոսն իր մահկանացուն կնքում է աքսորում:

ՊԻՈՆ ՔԱՀԱՆԱ

Պիոն քահանան բազմաթիվ հեթանոսների քրիստոնյա է դարձնում և ամրացնում հավատը այն քրիստոնյաների, որոնք հալածանքների շրջանում անկայուն դիրքի վրա էին գտնվում: Պիոն քահանան երբ դատական ատյան է տարվում, քննության համար, նույնիսկ այնտեղ նա սրտագին հորդորներ է ուղղում թե՛ հեթանոսներին և թե՛ հրեաներին:

Բազմաթիվ և բազմապիսի տանջանքների ենթարկվելուց հետո, Պիոն քահանան կենդանի այրվում է խարույկի վրա:

ԿՅՈՒՐԵՂ ՍԱՐԿԱՎԱԳ

Կյուրեղը սարկավագ էր Լիբանանի Հելիոպոլիս քաղաքում: Ամբաստանվելով Հուլիանոս Ուրացող կայսեր մոտ այն բանի համար, թե նա Կոստանդիանոս կայսեր օրոք մի շարք կռատներ է կործանել,

562 թվականին հանձնվում է քրմերի վրեժխնդրությանը: Օգտվելով իրենց ընձեռված հնարավորությունից, նրանք մի ակընթարթում հոշոտում են Կյուրեղ սարկավագի մարմինը և ուտում նրա լյարդը, որի համար էլ չարաչար մեռնում են նաև իրենք:

ԲԵՆԻԱՄԻՆ ՍԱՐԿԱՎԱԳ

Բենիամին սարկավագն ապրել և գործել է Թեոդոս Բ (Կրտսեր) կայսեր (408—450) և պարսից Հազկերտ Ա-ի (399—420) օրոք:

Պարսից շրջանում քրիստոնեությունը քարոզելու համար ձերբակալվում և բանտարկվում է Հազկերտ Ա-ի հրամանով: Երկու տարի բանտում մնալուց հետո, Թեոդոս կայսրը միջնորդում է ազատ արձակելու նրան: Պարսից թագավորը խոստանում է ազատել նրան՝ պայմանով, որ Բենիամինը հրաժարվի պարսից շրջանում քրիստոնեությունն քարոզելուց: Բենիամինը, սակայն, կտրականապես մերժում է՝ ասելով, որ անհնար է արգելել Աստուծո շնորհքը մարդկանց:

Ի վերջո արքան տեղի է տալիս դեսպանների աղաչանքին, և Բենիամին սարկավագն ազատ է արձակվում: Բայց վերջինս չթուլացող ջանասիրությամբ շարունակում է իր ավետարանչական գործունեությունը և բազմաթիվ նորադարձներ մկրտում, որի պատճառով էլ կրկին նետվում է բանտ: Բանտում ենթարկվում է անավոր տանջանքների և 418 թվականին հոգին ավանդում՝ Աստծուն գոհություն և փառաբանություն տալով:

Սրանից հետո է միայն, որ Ս. Սահակ Պարթևի և Ս. Մարութայի դիմումների վրա Հազկերտ Ա-ը դադարեցնում է իր հալածանքները քրիստոնյաների դեմ:

ԱԲԴԼՄԵՍԵՀ ՎԿԱ

Աբդլմսեհը Պարսկաստանի Շիդար քաղաքից էր, Ղևի անունով մի հրեայի որդի, Ասեր անունով: Ծնողները մեծահարուստ հրեաներ էին և ունեին բազմաթիվ զավակներ, որոնցից կրտսերն էր ինքը: Նա Դավթի նման արածացնում էր հոր ոչխարներն ու արջառները: Իր անասունների հոտը ջրելու էր տանում մի վայր, որտեղ հավաքվում էին քրիստոնյա և պարսից զրադաշտական կրոնին հետևող մի խումբ հովիվ տղաներ: Այս երկու կրոններին հետևող տղաները հավաքվում էին երկու տարբեր խմբերում, իսկ Ասերը, որ հրեա էր, մնում էր առանձին, մեկուսացված: Եվ քանի որ նրա համակրանքը դեպի քրիստոնյա տղաներն էր, և ձգտում էր նրանց խմբին միանալ, ուստի առաջարկում է նրանց՝ քրիստոնյա դարձնեն իրեն: Այդպես էլ լինում է: Նրանք մկրտում են Ասերին ջրհորի մոտ գտնվող ավազանում և նրան կոչում Աբդլմսեհ, որ նշանակում է «Ծառա Քրիստոսի»: Եվ որպեսզի Աբդլմսեհը հաստատուն մնա իր հավատքի մեջ, տղաները ծակում են նրա ականջաբլթակը և գինդ անցկացնում:

Երբ Աբդլմսեհը տուն է վերադառնում, և մայրը իմանում է կատարվածի մասին, իմաստուն ու բարի այդ կինը անում է այնպես, որ իր ամուսինը այդ մասին չիմանա:

Մի անգամ տղան տեսիլք է ունենում և այն պատմում մորը, թե ինչպես Քրիստոս իրեն դուրս է բերում մութ հորից՝ ձեռքը բռնած: Այս բանից ներշնչված, մայրը նույնպես ընդունում է քրիստոնեություն:

Իսկ հրեական մի տոնակատարության ժամանակ հայրն իմանում է տղայի հետ կատարվածի մասին և բազմության առաջ ծեծի ենթարկում և անգամ սուրը հանելով ցանկանում սպանել նրան: Աբդլմսեհը մի կերպ փախչում է իր մկրտության վայր: Բայց հայրը վրա է հասնում և սրախողխող անում տղային:

Դրանից հետո ընկերները գալիս և թաղում են Աբդլմսեհի մարմինը: Մայրն այդ վկայարանում մկրտվում է և մխիթարվում նահատակի մայր լինելու երջանկությամբ:

ՈՐՄԶԴԱՆ

Որմզդանը Հազկերտ Ա-ի օրոք պարսկական արքունիքում պարսիկ քրիստոնյա նախարար էր: Անվան պարսկական ձևը հավանաբար Որմիզդ կամ Հյուրմյուզ է: Երբ մերժում է հրաժարվել քրիստոնեական կրոնից, որպես պատիժ Որմիզդը պաշտոնանկ է արվում, զրկվում իր դասակարգի բոլոր պատիվներից և ուղարկվում արածացնելու արքունի ուղտերի երամակները: Որմիզդն այնուհետև տվայտում է աղքատության մեջ: Բայց, որոշ ժամանակ անց, թագավորն ազնվականի շապիկ է ուղարկում նրան՝ ասելով. «Հիշիր նախկին ազնվականիդ և վերադարձիր մեր կրոնին»: Որմիզդը, սակայն, ուղարկված շապիկը կտոր-կտոր է անում և ետ ուղարկում թագավորին՝ ասել ցանկանալով, որ իրեն ավելի փառավոր պատմուճան է վերապահված Երկնքի Արքայությունում:

Այս բանի համար թագավորի հրամանով Որմիզդը գլխատվում է:

ՍԱՅԻՆ

Սայինը Հազկերտ Ա-ի օրոք քրիստոնյա դարձած պարսիկ բարձրաստիճան պաշտոնյա էր: Բազմաթիվ հորդորներն ու ստիպումները, այն մասին, որ նա վերադառնա զրադաշտական կրոնին, կտրականապես մերժվում են: Սայինն ուներ ավելի քան հազար ծառաներ և մեծ հարստություն: Հազկերտ Ա-ը հրամայում է պատվազուրկ անել նրան, ունեցվածքը և կնոջը հանձնել նրա ամենանվաստ ծառային, իսկ Սայինին էլ, որպես առավել նվաստացում, այդ նույն ծառայի մոտ նշանակել սպասավոր: Սայինն անտրտունջ կրում է այս բոլոր նվաստացումները՝ հիշելով իր Տիրոջը, որ իր ծառայից ապտակ էր ստացել:

Ի վերջո, 418 թվականին Սայինը սրով ստանում է իր նահատակության պսակը:

Փետրվարի 5-ին

ՍՈՒՔԻԱՍՅԱՆՔ

Սուքիասյանք տասնինն պալատական ալաներ էին, որոնք Հայաստան էին եկել Սաթենիկ թագուհու հետ՝ Արտաշես թագավորի հարսանիքին մասնակցելու: Արքունիքում հանդիպում են Ոսկյան քահանաներին և քրիստոնյա դառնում: Ոսկյան քահանաների նահատակությունից հետո, քաշվելով Բագրևանդի լեռներից մեկը, լեռ, որը հետագայում, ի հիշատակ Սուքիասի, կոչվում է Սուկավետ, Սուքիասյանք 44 տարի մնում են այնտեղ՝ վարելով ճգնողական կյանք, մեկուսացված մարդկային հասարակությունից:

Ալանաց Շապուհ թագավորի մահից հետո գահ է բարձրանում Գինգիանոսը, որը հրավեր է ուղարկում Սուքիասյաններին՝ վերադառնալ իրենց հայրենիք: Սակայն Սուքիասյանք կտրականապես մերժում են թագավորի հրավերը:

Այնուհետև ալանաց թագավորի հրամանով Սուքիասյանք գազանաբար խոշտանգվում են և նահատակվում նույն Սուկավետ լեռան վրա:

Փետրվարի 7-ին

ՈՍԿՅԱՆՔ

Ազգային ավանդության համաձայն, Հռոմից հայոց Սանատրուկ թագավորի մոտ են ուղարկվում հինգ դեսպաններ, որոնց գլխավորի անունն էր Խոուսի, որ նշանակում է՝ Ոսկի: Սրանք Հայաստան գալու ճանապարհին հանդիպում են Թադեոս առաքյալին և, աշակերտելով նրան, մկրտվում նրա կողմից, իսկ Ոսկին ձեռնադրվում է նույնիսկ քահանա:

Այնուհետև Ոսկյանք գալիս են Արտաշես թագավորի և Սաթենիկ թագուհու արքունիք և քրիստոնեություն քարոզում: Թագուհու ազգականներին, որոնք ազգությամբ ալան էին, Եփրատի ակունքներում մկրտում են, իսկ նրանց գլխավորին՝ կոչում Սուքիաս: Այս բանի համար 107 թվականին Արտավազդ արքայորդու կողմից նահատակվում են:

Սուքիասյանք ամփոփում են Ոսկյանների մարմինները և նրանց փոխարեն իրենք կրոնավորում:

Փետրվարի 9-ին

ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ

Սահակ Հայրապետի մասին կխոսվի Թարգմանչաց տոնին:

Փետրվարի 12-ին

ՂԵՎՈՆԴՅԱՆՔ

Ղևոնդյանց անվան տակ ճանաչվում են այն հոգևորականները, որոնք Վարդանանց պատերազմից հետո, Ատրորմիզդ մարզպանի դրդումով, պարսից Հազկերտ Բ-ի կողմից ձերբակալվում են՝ երկիրը ապըստամբական նոր խլրտումներից զերծ պահելու համար, և տարվում Ապար աշխարհի Նյուշապուհ բերդ:

Այնուհետև նրանց առաջարկվում է ընդունել մազդեզականություն՝ իրենց կյանքը փրկելու համար: Ղևոնդյանք մերժում են այս առաջարկը:

454 թվականին քուշանների դեմ մղած մարտերում Հազկերտ Բ-ը պարտություն է կրում: Մոգերը այս պարտության պատճառը վերագրում են Ղևոնդյաններին: Այս անհիմն պատճառաբանությամբ պարսից շահի հրամանով բոլորը նահատակվում են:

Պատմությունը հիշատակում է Ղևոնդյանց քահանաների անունները: Դրանք են՝ Հովսեփ կաթողիկոս (Հողոցմանց գավառի Վայոց ձոր գյուղ), Սահակ եպիսկոպոս (Ռշտունյաց գավառ), Ղևոնդ երեց (Վանանդի Իջավանք գյուղ), Մուշե քահանա (Աղբակ), Արշեն երեց (Բագրևանդի Եղեգիկ գյուղ), Քաջաջ սարկավագ (Ռշտունյաց գավառ):

Այս վեց նահատակ քահանաների հետ էին նաև Աբրահամ և Խորեն երեցները, որոնք թեև ցանկանում էին նահատակվել նշված մարտիրոսների հետ, սակայն նրանք

այդ բանին չեն արժանանում: Այս երկու քահանաներին ազատ են արձակում տարագրության մեջ ապրելու՝ կորցրելով միայն նրանց ականջները:

Որոշ ժամանակ անց, չդիմանալով Ատրեստանի տոթակեզ եղանակներին, Խորենը մահանում է: Իսկ Աբրահամը հետագայում նույնիսկ թույլտվություն է ստանում վերադառնալու հայրենիք, որտեղ և ձեռնադրվում է Բզնունիքի եպիսկոպոս:

Աբրահամին է վերագրվում ասորական «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանությունը:

Փետրվարի 23-ին

ԹԵՈԴՈՐՈՍ ԶՈՐԱԿԱՆ

Թեոդորոս զորականը ծնվել է Ամասիա քաղաքի գյուղերից մեկում, քրիստոնյա ընտանիքում: Վաղ հասակից զրկվում է մորից և մեծանում հոր խնամքի տակ: Լինելով առաքինի և ֆիզիկապես ուժեղ մի երիտասարդ, շրջանի զորապետը նրան վերցնում է իր մոտ:

Մի ճանապարհորդության ժամանակ, երբ գետի ափին, ծառի տակ, Թեոդորոսը հանգստանում էր, նրա վրա է հարձակվում մի հսկա վիշապ: Թեոդորոսը վեր է թռչում և սրի մի հարվածով երկու կես անում նրան: Սրա համար էլ նա կոչվում է Վիշապասպան Թեոդորոս:

304 թվականին, երբ Դիոկղետիանոս կայսեր հրովարտակով սկսվում են հալածանքները քրիստոնյաների դեմ, Թեոդորոսը, հաստատելու համար, որ կուռքերը չեն տարբերվում քարից ու մարմարից, նույն օրերին կրակ է գցում քաղաքի մեհյանի մեջ և այրելով փոշի դարձնում կուռքերին: Այս պատճառով Թեոդորոսը ատյան է կանչվում: Քննության ժամանակ նա պնդում է այն միտքը, որ կուռքերը անշունչ առարկաներ են, սոսկ քարեր, իսկ այդպիսիք երբեք Աստված չեն կարող լինել, որ նրանք մարդու ձեռքով են պատրաստվել, իսկ մարդու ձեռքով պատրաստված կուռքը Աստված չէ:

Թեոդորոսն այնուհետև նետվում է բանտ: Բայց բանտում, շղթայակապ ձեռքերով և ոտքերով, նա չի դադարում օրհնության աղոթքներ երգել Աստծուն:

306 թվականին դատավորի վճռով Թեոդորոսն այրվում է կրակի վրա և այսպես ընդունում իր նահատակությունը:

Մարտի 1-ին

ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

Կյուրեղ Հայրապետ Երուսաղեմացու մասին կխոսվի **Երկոտասան Վարդապետացն** տոնի առթիվ:

ԿՅՈՒՐԵՂ-ՀՈՒԴԱ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ ԵՎ ՄԱՅՐՆ ԱՆՆԱ

Այս Կյուրեղը, որ կոչվում էր նաև Կիրակոս, ազգությամբ հրեա էր: Նախկին անունը եղել է Հուդա:

Հուդան ապրում էր իր մոտ՝ Աննայի հետ Երուսաղեմում: Երբ Հեղինե թագուհին գալիս է Երուսաղեմ՝ խաչափայտը փնտրելու, որով խաչվել է Հիսուս, տեղացի հրեաները մատնանշում են Հուդային՝ որպես քաջատեղյակ անձնավորություն Գողգոթայի տեղական մանրամասնությունների:

Ավանդությունը մեզ տեղեկացնում է, որ խաչափայտի գտնվելուց հետո Հուդան իր մոր հետ մկրտվում է և վերանվանվում Կյուրեղ: Հետագայում ձեռնադրվում է եպիսկոպոս Պաղեստինի վիճակներից մեկի վրա և Մեծն Կյուրեղ Երուսաղեմացու աթոռվելուց հետո գահակալում Երուսաղեմի պատրիարքական Աթոռին:

Երբ Հուլիանոս Ուրացող կայսրը գալիս է Երուսաղեմ, անլուր չարչարանքների և տանջանքների է ենթարկում Կյուրեղին և իր մորը: Կտրել է տալիս Կյուրեղի աջ ձեռքը, հալած կապար լցնում բերանն ու մարմնին և գեղարդով սպանել տալիս նրան:

Իսկ մորը՝ Աննային, հրամայում է կախել մազերից և ողջ մարմինը քերել մինչև ոսկորները:

Այսպես նահատակվում են մայր և որդի:

Մարտի 8-ին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ

Հովհաննես Հայրապետը 386 թվականին Երուսաղեմի պատրիարքական Աթոռի վրա հաստատվում է Կյուրեղ Երուսաղեմացուն: Հովհաննեսը նշանավոր է իր արքայորոն վարքով և կրոնագիտությամբ: Անարկու էր հանցապարտների նկատմամբ, բայց և չափազանց գորովագութ ու հայրագութ՝ դեպի հնազանդները: Սերտ և սրտագին բարեկամական հարաբերությունների մեջ էր Հովհան Ոսկեբերանի հետ, որն իր աքսորավայր Կուկիսոնից թղթակցում էր Հովհաննես Երուսաղեմացու հետ: Հովհաննեսի հոչակը տարածվել էր Աֆրիկայում, Հոռ-

մում և այլուր: Բարեկամական հարաբերությունների մեջ էր նաև Աֆրիկայի մեծանուն եպիսկոպոս Օգոստինոսի հետ: Բրիտանացի Պելագոսի, որն ապրել և գործել է Դ դարի վերջին քառորդին և Ե դարի առաջին տասնամյակներին, հերձվածողական հայտարարությունների դեմ ժողովներ է գումարում Հովհաննես Երուսաղեմացին և խստորեն դատապարտում նրա դատողությունները, սակայն Պելագոսը դարձվածքներով կարողանում է փրկել իր անձը դատապարտությունից:

Հովհաննես Երուսաղեմացին վախճանվել է 417 թվականին, խաղաղ մահով:

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ, ՀՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Մարտի 22-ին

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Հայ Եկեղեցու այս եռամեծ վարդապետների կյանքին և գործունեությանը կանդրադառնանք Հայ Եկեղեցու վարդապետների տոնին:

Մարտի 15-ին

ՔԱՌԱՍՈՒՆ ՄԱՆԿՈՒՆՔ

Սրանք քառասուն երիտասարդ զինվորներ էին Կապադովկիայի կայսերական բանակում: Նրանք եկել էին Փոքր Հայքի զանազան քաղաքներից և բոլորն էլ քրիստոնյաներ էին: Նրանց՝ Սեբաստիայում գտնվելու ժամանակ Լյուսիաս դուքսը Լիկինոս կայսրից հրաման է ստանում քննության ենթարկել իր զինվորներին և պարզել՝ արդյոք քրիստոնյաներ կա՞ն իր բանակում: Այսպես քննության են ենթարկվում նաև նշված քառասուն զինվորները, որոնք բացահայտորեն հաստատում են իրենց քրիստոնյա լինելը: Դատավորը հորդորում և ստիպում է նրանց հրաժարվել քրիստոնեությունից և վերադառնալ բանակ՝ խոստանալով նրանց մեծ ապագա: Սակայն ձերբակալվածները միաբերան գոռում են. «Մեր ապագան արդեն իսկ որոշված է երկնքում»:

Այնուհետև այդ քառասուն երիտասարդ քրիստոնյաները ենթարկվում են բազմաթիվ փորձությունների և տանջանքների, բայց միշտ հաստատուն մնում իրենց հավատքին: Վերջապես նրանց մերկացնում և նետում են Սեբաստիայի մոտ գտնվող լիճը:

Ձմեռ էր: Գիշերը ջուրը սկսում է սառչել, որի հետևանքով ճաքճքում են նրանց մարմինները: Դատավորը գայթակղության համար լճի մոտ կառուցել էր տվել մի բաղնիք, որպեսզի երիտասարդ քրիստոնյաները ցրտից պատսպարվելու համար ստիպված լինեն մտնել այնտեղ և այդպիսով հրաժարվեն իրենց դավանանքից: Եվ արդարև պատահում է այնպես, որ վկաներից մեկը, չդիմանալով ձմեռվա սառնամանիքին, դուրս է փախչում ջրից և մտնում բաղնիք, բայց նույն ժամին էլ մահանում՝ չարժանանալով նահատակության պսակին:

Սակայն այդ դասալիքի տեղը գալիս է լրացնելու պահապան զինվորներից մեկը, որը գիշերվա մթության մեջ տեսնում է, թե ինչպես մի քանի անգամ երկնքից լույս է իջնում տանջահար այդ երիտասարդների վրա և լուսապսակներով զարդարում նրանց գլուխները: «Ես էլ քրիստոնյա եմ և պաշտում եմ Քրիստոսին» գոչելով միանում է նրանց խմբին:

Հաջորդ օրը դատավորը հրամայում է նահատակների անշնչացած մարմինները այրել և նետել գետը: Պատահում է այնպես, որ այդ քառասուն երիտասարդներից մեկը, որն ամենաերիտասարդն էր, կենդանի է մնում: Դատավորը որոշում է ներում շնորհել նրան՝ մտածելով, որ եթե ապրի, դարձի կգա: Սակայն մահամերձի մայրը շալակում է նրան և հետևում՝ դիակները այրելու տանող սայլին, որպեսզի որդին նույնպես ընդունի նահատակության պսակ: Ճանապարհին մահանում է նաև այս վերջին մարտիրոսը:

Իրականացվում է դատավորի հրամանը: Այրվում են քառասուն նահատակների անշնչացած մարմինները և նետվում գետը: Սակայն գետի ջրերը ի մի են հավաքում նահատակների մասունքները, որոնք և քաղաքի եպիսկոպոսի կողմից գիշերով ամփոփվում են գետեզրին, ապահով մի տեղ: